ԵՐԵՎԱՆ ԱՆՎԱՆ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Անժելա Տերյան
Երևանի պատմության թանգարանի
հնագիտության և միջնադարյան պատմության
բաժնի վարիչ, պատմաբան,

Երևանն աշխարհի հնագույն քաղաքներից է: Նրա տարածքում կատարված հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ մարդն այստեղ ապրել է տասնյակ հազարավոր տարիներ առաջ: Հատկանշական է այն փաստը, որ Երևանի տարածքը անընդհատ բնակեցված է եղել: Ուսումնասիրությունները պարզել են, որ քաղաքի տարածքում տարբեր ժամանակաշրջաններում առաջացել և տարբեր պատճառներով կործանվել են բազմաթիվ բնակավայրեր: Ժամանակագրական առումով քաղաքի տարածքում հայտնաբերված հնագույն բնակավայրը Երևանյան կամ Հրազդանյան քարայրն է / Երևանյան լճի մոտ, Հրազդան գետի ձախ ափին/, որի հնագույն, ստորին շերտը /4-5 մշակութային շերտ/ թվագրվում է մուստերյան շրջանով /100 000-35 000 տարի առաջ/: Այնուհետև Երևանի տարածքում մարդու բնակության հետքերը հայտնաբերվում են նոր բնակավայրերում, ստեղծելով պատմական հուշարձանների մի ամբողջական շղթա: Թվարկենք դրանք. Շենգավիթ, /մ.թ.ա. 4-2-րդ հազարամյակներ/, Ծիծեռնակաբերդ, Ավան, Ձեյթուն թաղամասեր, Կայարանամերձ հրապարակ /մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կես/, Կարմիր- բերդ / մ.թ..ա. 2-րդ հազարամյակի վերջ/, Կարմիր-բլուր /մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջ -1-ին հազարամյակի սկիզբ/, Արին բերդ /Էրեբունի, մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկիզբ/, Ավան- Առինջ /մ.թ.ա. 2-րդ-1-ին դարեր/, վաղ միջնադարյան Երևան /Կենտրոն/, Երևանի բերդ /7-րդ դար, 16-րդ դար/ և այլն:

Երևանյան քարայր, մ.թ.ա. 100.000-35.000 տարի առաջ

Ուսումնասիրողներին / Ղ. Ալիշան, Ղ. Ինճիճյան/ և Երևան այցելած օտարերկրյա ճանապարհորդներին / Ժ. Շարդեն, Ռոբերտ Կեր Փորտեր, Ուիլյամ Աուզլեյ, Լինչ/ հետաքրքրել է հատկապես Երևան անունը:

Երևան անունը /յերեւան ձևով/ հայ մատենագրության մեջ առաջին անգամ հանդիպում է V դարի հնագույն մի հիշատակարանում / «Հնոց և նորոց պատմութիւն վասն Դավթի և Մովսէսի Խորենացւոց, թուղթ Դիոնէսիոսի», Կ. Պոլիս, 1874/:

Երևանի մասին հաջորդ հիշատակությունը վերաբերում է 607 թ., երբ Դվինում հրավիրված եկեղեցական ժողովին մասնակցել են նաև Դավիթ Երեցը և Ձոջիկ անունով վանականը Երեւանից /«Գիրք Թղթոց» մատենագրութիւն նախնեաց, 1901/:

VII դարի պատմիչ Սեբեոսը ևս վկայություն ունի Երևանի մասին, կապված 642-643թթ. արաբական արշավանքների հետ / Սեբէոս, Պատմութիւնք, 1672 թ., Ձեռագիր մատյան, 2639/: Հովհ. Դրասխանակերտցու /IX-X դդ., Պատմութիւն Հայոց/, Ս. Անեցու /XII դար, «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» /, Ստ. Օրբելյանի /XIII դար, «Պատմութիւն նահանգին Սիսական»/ և այլ մատենագիրների աշխատություններում ևս հիշատակություններ կան Երեւանի մասին: Հայ մատենագրության մեջ **Երևանը** հիշատակվում է Երեւան, էրեւան, էրվան, էրուան, Երեւան, Արեւան[1] և այլ ձևերով:

Օտարերկրյա ճանապարհորդների և ուսումնասիրողների աշխատություններում Երևանը հիշատակվում է **Erivan, Irvan, Iravan, Ýðèâàí, Åðåâàí, Èðåâàí**[2] և այլ ձևերով: Ենթադրվում է, որ հույն աշխարհագիր Կլավդիոս Պտղոմեոսի /II դար/ «Աշխարհագրություն» աշխատության մեջ նշված **Tervan**[3] բնակավայրը Երևանն է, և **Irvan** անվան **I**-ն թյուրիմաձաբար գրվել է **T** ձևով, քանի որ

Tervan- ը քարտեզում նշված է նույն աշխարհագրական լայնության վրա, ինչ Երևանը:

Գոյություն ունեն Երևան անունը մեկնող բազմաթիվ բացատրություններ և ավանդություններ: Ամենահին և ամենատարածված բացատրությունը կապված է Նոյ նահապետի անվան հետ: Ժողովրդի մեջ տարածված ավանդության համաձայն, ջրհեղեղից հետո, երբ ջրերը ետ են քաշվել, Նոյը Արարատ սարից տեսել է ցամաք ու բացականչել « երևաց, երևաց», որն էլ հետագայում ձևափոխվելով դարձել է Երևան: Այս ավանդությունը հին է և միշտ տարածված է եղել ժողովրդի մեջ: Այդ են վկայում Երևան այցելած օտարերկրյա ճանապարհորդները, որոնց տեղացիները պատմել են այդ ավանդությունը:

Առաջիներից մեկը, ով վկայում է այդ մասին ֆրանսիացի ճանապարհորդ ժան Շարդենն է,[4] որը 1672-73թթ. եղել է Երևանում: Տեղի հայերը Շարդենին պատմել են, որ Երևանը Նոյի բնակության վայրն էր մինչև ջրհեղեղը և կառուցվել է նույն տեղում ջրհեղեղից հետո[5]:

Երևան անունը և քաղաքի հիմնադրումը Նոյի հետ են կապում նաև Ուիլյամ Աուզլեյը, Ռոբերտ Քեր Փորթը,[6] Ա. Հաքստհաուզենը, Լինչը [7] և ուրիշներ: Հայ պատմագրության մեջ վերոհիշյալ ավանդությանը անդրադարձել են Ղ. Ինճիճյանը,[8] Մ. Սմբատյանը և ուրիշներ: Այս տեսակետը այսօր էլ մնում է որպես ժողովրդական ավանդություն և վկայում է, որ Երևանը շատ հին բնակավայր է:

Շենգավիթ բնակատեղի , մ.թ.ա. 5-3-րդ հազարամյակներ

Երևան անվան բացատրության այլ տեսակետի համաձայն Երևան անունը կապվում է Երվանդյան հարստության վերջին թագավոր Երվանդ 4-րդի անվան հետ /մ.թ.ա. 220-201թթ./: Հ. Նալյանը ենթադրում է, որ Երևանը Երվանդի կառուցած Երվանդաշատ մայրաքաղաքն է, այլ ուսումնասիրողներ՝, որ Երվանդավան քաղաքն է և այլն: Օտարերկրյա ճանապարհորդները ևս վկայում են, որ Երևան անունը ըստ հայոց մեջ տարածված այլ ավանդության կապվում է Երվանդ թագավորի անվան հետ[9]: Բացատրությունների շարքում պարզապես կարելի էր անտեսել թուրք-պարսկական մի ավանդություն, ըստ որի Երևան անունն առաջացել է պարսիկ խան Ռևան-Ղուլիի անունից: Դա անընդունելի է հենց միայն այն պատճառով, որ այդ խանը Երևանում իշխել է 16-րդ դարի սկզբներին, իսկ Երևանը և նրա անունը հազարամյակների պատմություն ունեն:

19-20-րդ դարերում Հայաստանի տարածքում հայտնաբերված հայոց հնագույն Արարատ-Ուրարտու /Բիայնիլի, Վանի թագավորություն/ պետության արքաների սեպագիր արձանագրությունների հայտնաբերումն ու ընթերցումը հնարավորություն տվեցին ոչ միայն ճշգրտել մի շարք աշխարհագրական անուններ, այլև նոր ձևով բացատրել դրանց իմաստը:

Ուրարտական արձանագրություններում ընթերցվում են էրիանի, էրիախի, էրեբունի անունները: Ռուսա 1-ին /735-713 թթ./ թագավորի արձանագրության մեջ, որ հայտնաբերվել է Սևանա լճի ափին գտնվող Ծովինար գյուղում, 22 երկրանունների հետ հիշատակվում է նաև էրիաինի անունը[10]: Ռուս հնագետ Մ. Նիկոլսկին էրիաինին /երկիրը/ տեղադրում է Երևանի շրջակայքում , Արին-բերդ բլուրի վրա և Երևան անունը բխեցնում էրիաինիից[11]: Այս տեսակետը ընդունելի են համարում Ե. Շահազիզը,[12] Խ. Սամվելյանը[13] և ուրիշներ:

Շատ կարևոր էր հատկապես Նիկոլսկու կռահումը, որ հնագույն Երևանը պետք էր որոնել Արին-բերդ բլուրի տարածքում, որտեղ ռուս մեկ այլ հետազոտող՝ հնագետ Ա. Իվանովսկին առաջին անգամ ուսումնասիրել ու նկարագրել է ամրոցի ավերակները[14]:

էրիանին տեղադրել են նաև Սևանա լճի շրջակայքում /Ի. Մեշչանինով, Գ. Մելիքիշվիլի, Գ. Ղափանցյան/[15]: Գ. Ղափանցյանը էրիանի ամրոցն ու երկիրը նույնացնում է և կապում **eria /aria/** ցեղի անվան հետ: Նա էրիանի երկիրը համարում էր նույն **eria /aria/** ցեղի երկիրը: Գ. Ղափանցյանը **eria /aria/** ցեղի հետ էր կապում նաև

էրիախի երկիրը, որը ոմանք նույնացնում են էրիանի երկրի հետ: էրիախին Ղափանցյանը տեղադրում էր Կումայրիի շրջանում:

Նորից անդրադառնալով **eri** /ari/ ցեղի անվանը նա հնարավոր էր համարում, որ Երևան անունը առաջացած լինի eri-avan ,,eri-երկիր,, ձևից, որն ավելի ուշ հնչում է Երևան ձևով: Գ. Ղափանցյանը Երևան անունը բխեցնելով էրիա /արիա/ ցեղի ու երկրի անունից, միաժամանակ դա առեղծվածային է համարում, քանի որ ըստ նրա էրիա ցեղը և երկիրը /էրիախի/, գտնվում էին Գյումրիի տարածքում: Ինչպես տեսնում ենք վարկածների և տեսակետների շարքում Գ. Ղափանցյանը առաջ է քաշում այն տեսակետը, որ Երևան անունը կարելի է բացատրել «էրի աւան» իմաստով[16] :

Երևանի հիմնադրման և տեղադրման հարցերի պարզաբանման համար մեծ նշանակություն են ունեցել 1950 թ. Արին-բերդ բլուրի պեղումների ժամանակ հայտնաբերված արձանագրությունը /Կ. Հովհաննիսյան/ և Վանի քարաժայռի վրա փորագրված Խոռխոռյան հիշատակությունը /տարեգրություն/, որը 1828թ. հայտնաբերել է արևելագետ Ֆ. Շուլցը: Այդ արձանագրության մեջ ընթերցվում է էրեբունի /բնակավայրի/ անունը, որը հիմնադրել է Արգիշտի 1-ինը /մ.թ.ա 786-754թթ./, սակայն պարզ չէր, թե որտեղ է հիմնադրվել նոր բնակավայրը: Խոռխոռյան արձանագրության մեջ Արգիշտի 1-ինը գրում է «Խալդ աստծո հրամանով, Արգիշտին, Մենուայի որդին էրեբունի քաղաքը կառուցեց Բիայնիլիի հզորության համար....: Հողը ամայի էր...: Հզոր գործեր ես այստեղ կատարեցի: Խաթե /և/ Ծոպանե երկրներից ես այնտեղ 6 հազար 600 զինվորներ բնակեցրի»[17]: Արին-բերդից հայտնաբերված արձանագրությունը վկայում է «Խալդ աստծո մեծությամբ, Արգիշտին, Մենույի որդին, այս հոյակապ բերդը կառուցեցի, կոչեցի Իրբունի, Բիայնիլի երկրի հզորության համար: Հողը ամայի էր: Հզոր գործեր կատարեցի...»[18]:

Արգիշտի 1-ինի արձանագրությունը էրեբունի բերդի հիմնադրման մասին, մ.թ.ա., 782թ.

Այս երկու արձանագրությունները և Արին-բերդ բլուրի ստորոտից հայտնաբերված նորքեցի Պ. Տեր-Ավետիսյանի արձանագրությունը հնարավոր դարձրին ճշգրտելու Արգիշտիի կառուցած էրեբունի ամրոցի տեղը, ճշգրտվեց նաև ամրոցի հիմնադրման տարեթիվը. մ.թ.ա. 782թ:

Արին-բերդի արձանագրության հայտնաբերումից և ընթերցումից հետո ուսումնասիրողների /Բ. Պիոտրովսկի, Մ. Իսրայելյան, Կ. Հովհաննիսյան/ կողմից առաջ է քաշվում այն տեսակետը, որ Երևան անունը ծագել է էրեբունի անունից, իսկ Մ. Իսրայելյանը կարծիք է հայտնում , որ էրեբունի նշանակում է «հաղթանակ»[19]:

էրեբունի անվան բացատրության մասին այլ կարծիք է հայտնում Ի. Դյակոնովը: Նա էրեբունին բաժանում է ere-ebani բաղադրիչների և ենթադրում, որ այն **ere** **ցեղի երկիր** իմաստն ունի[20]: Ինչպես տեսնում ենք, այս բացատրությունը նման է Գ. Ղափանցյանի կարծիքին: Սակայն Ի. Դյակոնովի տեսակետի դեմ առարկում է Մ. Իսրայելյանը: Նրա կարծիքով ուրարտերենում առկա է **er/e/bu** բայարմատը՝ իր «առևանգել, հաղթել» իմաստներով, և հավանական է համարում, որ բերդանվան հիմքում ընկած լինի հենց այդ բառը, որից էլ ինչպես վերևում նշվեց, հեղինակը ենթադրում է, որ առաջացել է էրեբունի «հաղթանակ» անունը:

Վերոհիշյալ բոլոր բացատրությունները տարիներ շարունակ ընդունվել կամ մերժվել են ուսումնասիրողների կողմից[21]: 20-րդ դարի վերջին- 21-րդ դարի սկզբին **Երևան** անվան ծագման հարցը նորից հայտնվեց ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Առաջ քաշվեցին նոր տեսակետներ ու ենթադրություններ: Անդրադառնանք մի շարք տեսակետների: Ուրարտագետ Հ. Կարագեոզյանը Արգիշտի 1-ինի արձանագրության մեջ բնակավայրի անունը կարդում է Երեբունե /Երեբոն չվկայված ձևից / և գտնում, որ Երեբունեն բաղկացած է Եր կամ երե /բույն/ բաղադրիչներից, որը նշանակում է «երջանիկ քաղաք»[21]:

է.Դանիելյանը ենթադրում է, որ էրեբունի անունը ծագել է Արա Գեղեցիկի անունից[22] : Փորձ է արվում **Երևան** անունը կապել նաև «երևացող, երևան» բառի հետ, երբ կրակով տրվող ազդանշաններով փոխհամաձայնեցվում էին ամրոցների պաշտպանների գործողությունները վտանգի ժամանակ [23]: Սակայն նշենք, որ կրակի /նաև ծխի/ միջոցով միշտ հնարավոր չէր տեսանելի կապ պահպանել: Եղանակային անբարենպաստ պայմանները, ցերեկվա լույսը /իսկ ռազմական գործողությունները հիմնականում ցերեկն էին լինում/ անիմաստ կարող էին դարձնել կրակ վառելը, միևնույն էր այն չէր երևա: Ընդունելով այդպիսի ռազմավարական հնարքի

գոյությունը, չենք կարող ընդունել, որ դա կապ ունի Էրեբունի-Երևանի անվանակոչության հետ: Կան նաև ուսումնասիրողներ, որոնք առաջարկում են **Երևան** անվան ստուգաբանությունը թողնել ապագային, երբ կհայտնաբերվեն նոր արձանագրություններ, սակայն հնարավոր չէ միանշանակ ասել, թե հետագայում հայտնաբերված նոր արձանագրությունները կարող են ավելին ասել, քան Էրեբունի անվանումն է:

Արգիշտի 1-ինի արձանագրություններում վկայված անունները Երևան /Էրեբունի/ անվան մինչև այժմ հայտնի հնագույն գրավոր հիշատակություններն են /ընթերցվում են նաև Իրպունի, Էրբունի, Երեբունի ձևերով/:

Հայտնի է, որ Երևանի տարածքը բնակեցված է եղել ավելի վաղ, քան հիմնադրվել է Էրեբունի ամրոցը: Թե ինչ անուներ են կրել Երևանի տարածքում հայտնաբերված հնագույն բնակավայրերը, հատկապես այսօրվա Շենգավիթը, որ մոտավորապես 6000 տարեկան է, հայտնի չէ: Այս իմաստով կարևորվում է Էրեբունի անունը՝ որպես հայոց մայրաքաղաքի մեզ հայտնի հնագույն անուն:

Հնում ընդունված է եղել նոր հիմնադրված բնակավայրը կոչել հիմնադրողի՝ արքայի կամ աստվածներից մեկի անվամբ: Հայտնի է, որ ավելի ուշ Արգիշտի 1-ինը Արարատյան դաշտավայրում, Արաքսի ձախ ափին մ.թ.ա. 776թ. հիմնել է մի բնակավայր, որն իր անունով կոչել է Արգիշտիխինիլի[24] /ավելի ուշ Արմավիր/: Այս դեպքում կարելի է մտածել, որ Արին-բերդ բլուրի վրա հիմնադրված նոր բնակավայրի անվանակոչման համար Արգիշտի 1-ինը կամ օգտագործել է տարածքում եղած ու նրան հայտնի հնագույն այլ բնակավայրի անուն, կամ կոչել է **eri, ari** ցեղի /երկրի/ անունով: Հետաքրքիր է, որ Հայկական լեռնաշխարհից ու շրջակա տարածքներից հեռացած հնդեվրոպացիների նախնիները՝ արիական ցեղերը հիշում են իրենց արի ցեղին պատկանելու փաստը և գրավոր աղբյուրներում նշում են այդ մասին /հնդկական վեդաներ, իրանական «Ավեստա», պարսից Դարեհ 1-ինի Բեհիսթունյան արձանագրություն/: Ուրարտական գրավոր աղբյուրները, նաև հայկական միջնադարյան մատենագիրները իրենց աշխատություններում ուշադրություն չեն դարձնում այդ փաստին: Պետք է մտածել, որ դա նրանց իրականությունն էր, նրանք ապրում էին հայրենիքում և կարիք չունեին անընդհատ հիշելու այդ մասին: Այս դեպքում էլ Արգիշտի 1-ինը, պարզապես հիմնել է բնակավայր և կոչել արի կամ էրի /ցեղի/ ավան /կամ օգտագործել է եղած հնագույն անունը/:

Ինչպես վերևում նշվեց, հպանցիկ ձևով այս բացատրությունը դեռևս 1930-40-ական թվականներին առաջ է քաշել Գ. Ղափանցյանը: Փորձենք զարգացնել այս

տեսակետը: Հայտնի է, որ Հայկական լեռնաշխարհում Ար-ով /նաև էր, Ուր, Իր/ սկսվող բազմաթիվ աշխարհագրական (նաև անձնական) անուններ կան. Արարատ, Արագած, Արա, Արաքս, Արածանի, Արմավիր, Արճեշ...: Այս երևույթը կապված է Արարչի /Ար Աստված/ և նրա պաշտանմունքն ունեցող Հայկական լեռնաշխարհի բնիկների՝ հայ-արմենների՝ արմեն, նաև արի /էրի/ անվան հետ:

Նկատում ենք, որ էրիվան Արիվան, Երեւան, Իրեւան, անունները ևս սկսվում են Ար-, էր-, Իր- բաղադրիչներով: Անվան երկրորդ մասը –վան բաղադրիչն է: Հայկական լեռնաշխարհում բազմաթիվ բնակավայրեր կան, որ ունեն –վան վերջավորությունը /բաղադրիչը/. Վան, Նախիջեւան, Իջեւան, Դիցավան, Օթեւան, Ավան, Վանք և այլն: Բոլոր օրինակներում –վանը տեղի, բնակավայրի իմաստն ունի: Երեւան անվան մեջ ևս հանդիպում է -վան վերջավորությունը: Իսկ անվան Ար-, էր- բաղադրիչը /արմատը/ այս դեպքում արի, էրի ցեղի անվան հետ է կապված: Հետևաբար կարելի է ասել, որ Երևան անվան Արեվան, Արավան, էրիւան և այլ տարբերակներ կազմված են Ար-, էր- և -վան /ւան/ բաղադրիչներից, որն Արարչին /Ար Աստծուն/ պաշտող ցեղի՝ **արի կամ էրի /ցեղի/ աւան** իմաստն ունի:

Արգիշտի 1-ինի արձանագրության մեջ հիշատակվող էրեբունի անունը ևս խոսում է արի /էրի/ ցեղի աւան բացատրության օգտին: Ուրարտական սեպագրերում **ebani-ն երկիր, բնակավայր** իմաստներն ունի[25]: Ուսումնասիրողները նույնիմաստ բառեր են համարում հայերեն **աւանը** և ուրարտական արձանագրություններից հայտնի **ebani-ն**[26]: Ինչպես տեսնում ենք այս դեպքում էլ էրեբունին կարելի է կարդալ իբրև արի կամ էրի /ցեղի/ աւան: Ավելորդ չէ հիշել, որ օտարերկրյա ճանապարհորդների ուղեգրություններում **Երևանը** պարսկական տարբերակով հիշատակվում է Իրիվան, Իրեւան , Իրվան, Իրավան, էրիվան, ձևերով[27]: Հայաստանի հնագույն հարևան ու ազգակից իրանցիների կողմից օգտագործվող Երևան անվան իրանական տարբերակը ևս վկայում է, որ Երևան անունը արի կամ էրի /ցեղի/ ավան իմաստն ունի[28]: Համեմատության համար հիշենք Իրան անունը, երբ իրանցիների մոտ Ար-ը հանդես է գալիս Իր- ձևով: Իսկ ուսումնասիրողներից մեկը /Անքետիլ/ նույնիսկ ենթադրում է, որ Երևան անունը նմանություն ունի «Ձենդ Ավեստայում» հիշատակվող արիների նախահայրենիքի՝ **Eerien Veedjo** կամ **Iran Vedj** անվան հետ[29]:

Այսպիսով հայոց մայրաքաղաքի Երևան անունը **արի կամ էրի /ցեղի/ աւան, արիների բնակավայր** իմաստն ունի:

Ծանոթագրություններ

1. Ղ. Ալիշան,Այրարատ, էջ 259: Հանդէս ամսօրեայ, 1934 թ., թիվ 5-7, էջ 327-328: Թ. Հակոբյան, Երևանի պատմությունը, հ. 1, Երևան 1969թ., էջ 96-99:
2. Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Զ., Երևան 1934թ.: Թ. Հակոբյան, հ. 1, էջ 96-99:
3. Ռ. Գալչեան, Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ, Երևան, 2005թ.:
4. Chardin edit Paris, 1811, ò.2, ñ.169, Õ. Ô. Á. Ëèí÷, Àðìåníèÿ, Òèôëèñ, 1910 ã., ò.1, ñ. 273:
5. Շարդենը անհավանական է համարում այդ ավանդությունը, քանի որ ըստ նրա հայերենը նոր լեզու էր և 700 տարի առաջ իբրև թե նույնիսկ հայտնի չէր: Նա անհավանական է համարում նաև Պտղոմեոսի քարտեզում նշված Tervan բնակավայրը Երևանի հետ նույնացնելը, քանի որ ըստ նրա, Երևանում հնագույն հուշարձաններ չկան: Ïóòåøåñòâèå Øàðäåíà ïî Çàêàâêàçüþ â 1672-1773ãã., Òèôëèñ, 1902ã., ñ. 243-245: Թ. Հակոբյան, հ.1, էջ 99 /ծանոթագրություն 3/:
6. Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, էջ 454, 761:
7. Õ.Ô.Á. Ëèí÷, Àðìåníèÿ, ò.1, ñ. 273:
8. Ղ. Ինճիճյան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. 1, Վենետիկ, 1835թ., էջ 273-274:
9.. Õ.Ô.Á. Ëèí÷, Àðìåníèÿ, ò.1, ñ. 273: Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, էջ 453-454:
10. Á. Ïèîòðîâñêèé, Âàíñêîå öàðñòâî, /Óðàðòó/, Ì., 1959ã., ñ. 91: Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, /այսուհետ՝ ՀԺՊՔ/, Երևան, 1981թ., էջ 85:
11. Ì. Íèêîëüñêèé, Êëèíîîáðàçíûå íàäïèñè Çàêàâêàçüÿ, « Ìàòåðèàëû àðõåîëîãèè Êàâêàçà», âûï. 5, Ì., 1896ã., ñ. 97:
12. Ե. Շահազիզ, Հին Երևան, Երևան, 1931թ., էջ 7:
13. Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, Երևան,1931թ., հ. Ա, էջ 82:
14. Ìàòåðèàëû Àðõåîëîãèè Êàâêàçà, Âûï. 5, ñ. 97-98:
15. Երևանի համալսարան, Գիտական աշխատություններ, 1940, հ. 14, էջ 321- 322:
16. Գ. Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, 1945, էջ 151 /ծանոթագրություն/: Երևանի համալսարան, Գիտական աշխատություններ, 1940, հ. 14, էջ 322:
17. Ã. Ìåëèêèøâèëè, Óðàðòñêèå êëèíîîáðàçíûå íàäïèñè³ /այսուհետ՝ ÓÊÍ/, 28: ՀԺՊՔ, էջ 57:

18. ՀԺՊՔ, էջ 55:

19. Մ. Իսրայելյան, Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն, Երևան, 1971, էջ 13:

20. Âåñò íèê äðåâíåé èñò îðèè, 1956 ã., 2, ñ. 62: Յովհ. Կարագեոզեան, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիիրներում, հ. 1, գիրք 1, Երեւան,1998թ., էջ 79-81:

21. Է. Դանիելյան, Հին հայոց առասպելաբանական պատկերացումները աստղային երկնքի մասին, ՊԲՀ,1989թ., թիվ 3, էջ 111 /ծանոթագրություն/:

22. Վ. Վահրադյան, «Երևան քաղաքի անունը», Գիտական հոդվածների ժողովածու նվիրված Երևանի պատմության հարցերին, Երևան, 2006, էջ 210-223:

23.Ã. Ì åëèêèøâèëè, ÓÊÍ, 127, ՀԺՊՔ, էջ 56:

25. Ã. Ì åëèêèøâèëè, ÓÊÍ, 28, / նաև էջ 393/:

26. Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային շրջան, Երևան, 1987թ., էջ 428:

27. Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, էջ 453: Ռ. Գալչեան, Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ:

28. Էրիվան, Արավան, Արեւան անունները հաճախ կապվում են նաև Արև-Աստծո պաշտանմունքի հետ: Այս դեպքում անունը կարելի է մեկնել իբրև արևի աւան: Ի դեպ Ար Աստվածը նաև արևի պաշտամունքն է խորհրդանշում: Սակայն առավել հավանական տարբերակը **արի** կամ **էրի /ցեղի/ աւան** տարբերակն է, քանի որ ինչպես վերևում նշվել է, այն կապվում է Հայկական լեռնաշխարհի բնիկների արի /արմեն/ անվան և Ար-էր-ով սկսվող աշխարհագրական այլ անունների հետ:

29. Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, էջ 453-454:

«ԵՐԵՎԱՆ 2». Երևանին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Ե. 2009